

## ՍԱՍՏԻԿ ՏՕԹ ԵՒ ԲԱԶՄԱԹԻ ԶՈՐԵՐ ԵՐՈՊԱՅԻ ՄԷՋ

Երոպական բազմաթիվ երկիրներ ակամատես կը դառնան տօթի անմախաղէպ ալիքի մը, որ ջերմաստիճանի մոր մը ցանցիչ հաստատած է բազմաթիվ երկիրներու մէջ: Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութեան համաձայն, սաստիկ տաքին հետեւանքով երոպայի մէջ ցարդ մահացած է աւելի քան 1300 հոգի:

## ԼԻՔԱՆԱՆ-ԻՍՐԱՅԷԼ ԾՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՇԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ

Օրեր տեսած բանակցային երկար նիստերէ ետք բազմաթիվ հակասութիւնները մեղմելէ ետք, Լիբանանի եւ Իսրայէլի կառավարութիւնները, 26 Յունիսին, Ուաշինկթընի մէջ ստորագրեցին շրջանակային համաձայնագիր մը, որ գործադրելու պարագային կրնայ առաջնորդել աւելի ամբողջական համաձայնութիւններու: Միացեալ Նահանգներու արտաքին գործերու նախարար Մարքո Ռուպիոյի գլխաւորութեամբ կատարուած արարողութեան ընթացքին համաձայնագիրը ստորագրեցին Լիբանանի եւ Իսրայէլի դեսպանները, ներկայութեամբ զոյգ երկիրներուն մէջ ամերիկացի դեսպաններուն: Համաձայնագիրը ներառեց հետեւեալ կէտերը. առաջին՝ համապարտութեան վերջ տալու, խաղաղ եւ ապահով ապրելու իրաւունքի փոխարձակման ճանաչում եւ տարակարծութիւնները բանակցային



միջոցներով լուծելու յանձնառութիւն: Երկրորդ՝ որոշ պայմաններու գործադրութեամբ, լիբանանեան զինուած ուժերը աստիճանաբար պետութեան հեղինակութիւնը կը հաստատեն երկրով մէջ՝ ճամբան հարթելով իսրայէլեան նահանջի եւ խաղաղ յարաբերութիւններու հաստատումի: Երրորդ՝ իսրայէլեան ուժերը կը նահանջեն փորձառական երկու շրջաններէ, որպէսզի այնտեղ տեղակայուին լիբանանեան ուժերը եւ ապահին ոչ-կառավարական զինեալ կազմակերպութիւնները: 4-րդ՝ Լիբանանի կառավարութիւնը յանձնառութիւն կը յայտնէ պետութեան հեղինակութիւնը ամբողջութեամբ վերականգնելու եւ զենքի մենաշնորհի որոշումի: 5-րդ՝ Իսրայէլ կը հաստատէ, որ Լիբանանի մէջ իրականացուցած գործողութիւնները հակադարձութիւն էին Յիւզաբաբի արարքներուն, ուստի զինեալ կազմակերպութիւններուն ապահովումը պիտի վերացնէ Լիբանանի դէմ նոր գործողութիւններ իրականացնելու պատճառները: 6-րդ՝ Լիբանան կը վերահաստատէ, որ իր օրինական զինուած ուժերը կը վայելեն զենքի մենաշնորհը եւ երկրին անվտանգութիւնը պահպանելու բացառիկ իրաւունքը: 7-րդ՝ զոյգ կառավարութիւնները կը վերապահեն ինքնապաշտպանութեան իրաւունքը: 8-րդ՝ երկու կողմերը կը կիսեն ապահով եւ վերակառուցուած Լիբանանի նպատակը, որ կը ներառէ տեղահանուածներուն տունդարձն ու խաղաղ ապրուստը: 9-րդ, Լիբանանի կառավարութիւնը ամերիկեան աջակցութեամբ կը գործադրէ օրինական զինուած ուժերուն հեղինակութիւնը ամբողջութեամբ խիստ գործողութիւն, աւելցնելով որ ամերիկեան յանձնարարները պիտի յատկացուին միայն երբ գործադրուին առաջին փուլերը: 10-րդ՝ Միացեալ Նահանգներ միջազգային գետնի վրայ աշխատանք պիտի տան օգնութիւն ներգրաւելու Լիբանանի համար՝ վերակառուցելու երկիրը եւ աշխուժացնելու տնտեսութիւնը: 11-րդ՝ Պէրլութ եւ Ուաշինկթըն աշխատանք կը տանին կանխելու ապօրինի զինեալ կազմակերպութիւններուն ֆինանսաւորումը: 12-րդ՝ երկու կողմերը պիտի կազմեն աշխատանքային յանձնախումբեր՝ դրսեւորելով բարի կամք: 13-րդ՝ երկուստեք աշխատանք կը տարուի ազատ արձակելու գերիները եւ որոնելու անհետ կորսուածները: 14-րդ՝ Լիբանան եւ Իսրայէլ կը դրուատեն հակամարտութեան վերջ տալու եւ խաղաղութեան հիմքերը հաստատելու ամերիկեան միջնորդական ջանքերը, դրուատելով այս առումով նախագահ Տոնըլտ Թրամփի տեսլականը:

### ԳԵՐԻՇԵԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՈՂԱՅԻՆ ԱՍԲՈՂՋԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու մէջ լիբանանեան դեսպանութիւնը տեղի ունեցածը համարեց Լիբանանի հողային ամբողջականութիւնն ու գերիշխանութիւնը վերականգնելու կարեւոր քայլ մը: Ուաշինկթըն ստորագրուած համաձայնագիրը համարեց Լիբանանի պետական գերիշխանութիւնը վերականգնելու կարեւոր փուլ, խոստանալով անյապաղ տրամադրել հարիւր միլիոն տոլարի մարդասիրական օգնութիւն: Միացեալ Նահանգներու արտաքին գործերու նախարարը յայտնեց, որ տակաւին շատ աշխատանք պետք է տարուի՝ գործադրելու համար լիբանանեան-իսրայէլեան համաձայնագիրը: Իսրայէլեան լրատուամիջոցներ կարծ ժամանակ ետք հաղորդեցին, որ ամերիկեան կողմը մնշած էր Թէլ Աւիվի վրայ, պահանջելով ներառել երկու փոփոխութիւն, որպէսզի կարելի ըլլար վերջնականացնել համաձայնագիրն ու երաշխաւորել անոր գործադրութիւնը:

Հանրապետութեան նախագահ ժողգէ Անու համաձայնագիր ստորագրութենէ ետք հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցաւ իր ամերիկացի պաշտօնակիցին հետ՝ քննարկելու զարգացումները եւ շնորհակալութիւն յայտնելու Ուաշինկթընի դրական ջանքերուն համար: Թրամփ իր կարգին պատրաստակամութիւն յայտնեց մօտիկ ապագային տեսակցելու Անուի հետ: Անու համաձայնագիրը համարեց Լիբանանի գերիշխանութիւնը վերականգնելու առաջին քայլ մը: Վարչապետ Նաուաֆ Սալամ իր կարգին նշեց, որ համաձայնագիր ստորագրելու նպատակն է ապահովել բռնագրաւեալ հողերէն իսրայէլեան ուժերուն նահանջը:

### ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՀՐԶՊԱՆԱԿԱՆ ԵՐԿԵԱԿԵՆ

Հրզպալլան ու Ամալը խստի դատապարտեցին լիբանանեան-իսրայէլեան համաձայնութիւնը, զայն համարեցին բռնագրաւում օրինականացող գործարք մը, հաւաստիացնելով որ ան պիտի չգործադրուի: Հրզպալլան ներկայացնող՝ առողջապահութեան եւ աշխատանքի նախարարները մերժեցին Իսրայէլի հետ ուղղակի բանակցելու գաղափարը, աւելցնելով որ կառավարութեան նիստերուն ընթացքին իրենք հաւանութիւն չեն տուած բանակցելու առաջարկին: Երկու օր շարունակ, Հրզպալլայի երեսփոխանները, պատասխանատուները եւ Հրզպալլայի արբանեակ համարուող կրօնական գործիչները յայտարարութիւններու, հարցազոյցներու եւ համացանցային գրառումներու ընդմէջէն բուն յարձակում գործեցին հանրապետութեան նախագահին եւ վարչապետին վրայ, զանոնք ամբաստանեցին Սահմանադրութիւնը խախտելու, համագոյակցութեան սկզբունքը անտեսելու եւ պարտուողական համաձայնութիւն մը կնքելու մէջ, աւելցնելով որ համաձայնագիրը իրենց չի վերաբերիր, այլ պիտի շարունակեն զինեալ պայքարը՝ յանուն հողերու ազատագրումի, գերիներու ազատ արձակումի եւ քաղաքացիներու տունդարձին: Երեսփոխան Նաուաֆ Մուսաուի նոյնիսկ զրպարտեց, թէ նախագահ Անուի կ'ուզէ քաղաքացիական պատերազմ հրահրել Լիբանանի մէջ եւ բանակի հրամանատարէն կը պահանջէ հրաժարիլ: Մինչ այդ, զօրավար Ռուտոլֆ Հայքալ Եարգէի մէջ ընդունեց ամերիկեան ուժերու կեդրոնական հրամանատարութեան



ղեկավարը՝ քննարկելու զինուորական համագործակցութիւնը շարունակելու անհրաժեշտութիւնը եւ Իսրայէլի հետ կնքուած շրջանակային համաձայնութիւնը գործադրելու հրամայականը: Կորիորդարանի նախագահ Նեպիի Պըրրի կարծիք յայտնեց, թէ համաձայնագիրը ինքն իրեն կը հակառէ, կարելի չէ զայն գործադրել եւ կը բանալ Լիբանանի մէջ ներքին խռովութիւններու դուռը: Պըրրի գրուեց իր իրանցի պաշտօնակից Սոհամմատ Պաղէր Ղալիպաֆի ու Եգիպտոսի արտաքին գործերու նախարարին հետ: Ան կը ուղղեց կանխելու Լիբանանի մէջ խռովութեան վտանգը, պահպանելու ներքին կայունութիւնն ու համագոյակցութիւնը: Ան շնորհակալութիւն յայտնեց Իրանին՝ Լիբանանի դէմ իսրայէլեան յարձակումները դադարեցնելու ուղղութեամբ ներդրած ջանքերուն համար: Ղալիպաֆ իր կարգին յայտնեց, որ Թեհրանի նպատակն է վերջ տալ Լիբանանի դէմ պատերազմին, ապահովել իսրայէլեան նահանջն ու տեղահանուածներուն տունդարձը: Հրզպալլայի եւ Ամալի պատասխանատուներուն արձակած ամբաստանութիւններուն զուգահեռ, բողոքի շարժումներ տեղի ունեցան Նաե: Հրզպալլայի եւ Ամալի ներկայութիւն վայելող շարք մը շրջաններու մէջ: Հրկիզուող անիւներով ժամանակաւորապէս փակուեցան օդակայանի ճամբան, Ռայթ-Պալպաքի եւ Թաւալայայի մայրուղիները: Լիբանանեան բանակի անյապաղ միջամտեց եւ արագօրէն վերաբացաւ ճամբաները՝ բախելով ցուցարարներուն հետ: Բանակը հաղորդագրութեամբ մը յայտարարեց, թէ կը յարգէ քաղաքացիներուն ազատ արտայայտուելու իրաւունքը, սակայն կոչ ուղղեց դրսեւորելու ազգային պատասխանատու ոգի եւ զերծ մնալու Պէրլութի եւ այլ շրջաններու մէջ բողոքի շարժումներ կազմակերպելու կոչերէն՝ յանուն ներքին կայունութեան: Ընդհանուր դատախազն ալ ապահովական եւ զինուորական կարողութեան նախարար Իսրայէլ Զայք շեշտեց, որ «բանակը պիտի շարունակէ գործողութիւնները Լիբանանի մէջ՝ չեզոքացնելու համար սպառնալիքները»: Արտաքին գործերու նախարար Կիտաուն Սաէր հնարաւոր համարեց Լիբանանի հետ խաղաղութեան կնքումը, պայմանաւ որ Լիբանան ձերբազատուի Հրզպալլայի միջոցաւ Իրանի լուծէ: Այսուհանդերձ, ինչպէս Լիբանանի, այնպէս ալ Իսրայէլի մէջ բողոքը դրական ջնկակցեցին համաձայնագիրը: Ազգային անվտանգութեան հարցերու նախարար Իմար Պէն Ղաֆիր բացայայտ սխալ մը համարեց Լիբանանի հետ

### ՀԱԿԱՍԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Իսրայէլի վարչապետ Պենիամին Նեթանիահու շեշտեց, որ «Ուաշինկթըն եւ Պէրլութ համաձայնած են Լիբանանի հարաւային ապահովական գօտիին մէջ իսրայէլեան ուժերու ներկայութեան», աւելցնելով որ Իսրայէլ կը վերապահէ որեւէ սպառնալիքի դէմ ազատօրէն գործելու իրաւասութիւնը: Պաշտպանութեան նախարար Իսրայէլ Զայք շեշտեց, որ «բանակը պիտի շարունակէ գործողութիւնները Լիբանանի մէջ՝ չեզոքացնելու համար սպառնալիքները»: Արտաքին գործերու նախարար Կիտաուն Սաէր հնարաւոր համարեց Լիբանանի հետ խաղաղութեան կնքումը, պայմանաւ որ Լիբանան ձերբազատուի Հրզպալլայի միջոցաւ Իրանի լուծէ: Այսուհանդերձ, ինչպէս Լիբանանի, այնպէս ալ Իսրայէլի մէջ բողոքը դրական ջնկակցեցին համաձայնագիրը: Ազգային անվտանգութեան հարցերու նախարար Իմար Պէն Ղաֆիր բացայայտ սխալ մը համարեց Լիբանանի հետ

## ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕԾՄԱՆ 31-ԱՄԵԱԿ

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի կաթողիկոսական ընտրութեան եւ օծման 31-րդ տարեդարձին առթիւ, Կիրակի, 28 Յունիսին, Անթիլիասի մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ տաճարին մէջ մատուցուած Սուրբ եւ Ամմահ Պատարագին ընթացքին կատարուեցաւ գոհաբանական աղօթք եւ Հայրապետական մաղթանք՝



Վեհափառ Հայրապետին առողջութեան, արեւշատութեան եւ արդիւնաւետ ծառայութեան համար: Ապա, Վեհարանին մէջ տեղի ունեցաւ շնորհաւորական հաւաք՝ ներկայութեամբ կղերականներու եւ լիբանանահայ կառոյցներու ղեկավարներուն ու ներկայացուցիչներուն: Միաբանութեան անունով ուղերձ յղեց Տ Ազատ վրդ. Ֆիլիքեան, որմէ ետք օրհնութեան խօսքով հանդէս եկաւ Արամ Ա. կաթողիկոսը:

## ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԽԱՂԱՔԱՐՏ

Երկար տարիներու ձգձգումներէ եւ ժխտողական քաղաքականութիւն վարելէ ետք, Իսրայէլի կառավարութիւնը 28 Յունիսին գումարած նիստին ընթացքին միաձայնութեամբ հաւանութիւն տուաւ Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալու նախագիծին, որ ներկայացուած էր արտաքին գործերու նախարարին կողմէ՝ Կազայի, Սուրիոյ եւ այլ հարցերով Թուրքիոյ հետ տարածաշրջանային լարուածութեան սուր աճի լոյսին տակ: Արտաքին գործերու նախարար Կիտաուն Սաէր շեշտեց, որ Յեղափոխութեան ճանաչումը ճիշդ որոշում էր, յիշեցնելով որ «մէկուկէս միլիոն մարդու կէտքը խլած այդ պատմական իրողութեան շուրջ վկան լուրջ տարակարծութիւններ:



Այժմ կը սպասուի, որ կառավարութեան հաւանութեան արժանացած օրինագիծը փոխանցուի խորհրդարան՝ պաշտօնապէս վաւերացնելու համար: Թուրքիոյ նախագահի աշխատակազմէն տեղի ունեցածը համարեցին Իսրայէլի կողմէ բացայայտ կեղծաւորութիւն, պատմական իրադարձութիւններու քաղաքական շահագործում, ինչպէս նաեւ պաղեստինցիներուն արհեստագործութիւնն ու մարդկութեան դէմ ոճիւրները քօղարկելու փորձ: Իսկ Անթիլիասի Արտաքին գործերու նախարարութիւնը լուրջ մտահոգութիւն յայտնեց իսրայէլեան ճանաչումին առնչութեամբ եւ Նեթանիահուի կառավարութեան կոչ ուղղեց հրաժարելու այդ քայլէն, տեղի ունեցածը համարելով «պատմական փաստերու աղաւաղում, հակասութիւններու խոչընդոտում եւ տարածաշրջանին մէջ խաղաղութեան հասնելու ջանքերու խոչընդոտում»:

Միւս կողմէ, Իսրայէլի վարչապետը կառավարութեան նիստին ընթացքին զգուշացուցած էր, որ իրենք շատ լուրջ կը համարեն Իսրայէլի նկատմամբ Էրտողանի սպառնալիքները եւ Իսրայէլը ոչնչացնելու անոր կոչերը: «Մենք մեր ամերիկացի բարեկամներուն ուշադրութիւնը պիտի հրաւիրենք թրջական յայտարարութիւններուն վրայ եւ զանոնք պիտի չանտեսենք», ըսաւ Պենիամին Նեթանիահու:

# Մեծարանքի Երեկոյ մը

## «ՔՍԱՆ ԿԱՆԱՂԱՆ»ՆԵՐՈՒՆ ԱՐԺԱՆԻ ՄԵԾԱՐԱՆՔ

ՊԱՐՈՅՐ ԱՂՊԱՇԵԱՆ  
Հրապարակագիր, բանասեր  
հայագետ, կրթական մշակ, հեղինակ

Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան Կուսակցութեան Լիբանանի Վարիչ մարմինը, հաւատարիմ իր գաղափարական սկզբունքներուն, տեսիլներուն ու պատմական դերակատարութեանց, այս տարի եւս մեծարած եւ արժեւորած էր 20 ԿԱՆԱՂԱՆԵՐՈՒ յուշ-յիշատակութիւն, յատուկ ու հանրագուտ հանդիսութեամբ մը, Ուրբաթ, 19 Յունիս 2026-ին, խումներամ բազմութեան մը ներկայութեամբ:

Աճնապէս, պատիւը ունեցայ իրաւորելու եւ ընդամաքելու ինծի ուղղուած հրաւերին, ըմբռնելու եւ վայելելու այդ պատմական եղելութեան ոգեկոչման արարողութիւնն ու հանդիսութիւնը, որ իսկապէս արժանի էր յիշատակութեան, ոչ միայն իր պատմականութեամբ, այլեւ գաղափարականութեամբ, սխրագործութեամբ եւ ազգայնականութեամբ:



Խոր գոհունակութիւն եւ մեծ ոգեկոչութիւն էր ներկայ գտնուիլ գաղափարական նման դպրոցի մը հիմնադիրներու եւ անձնագործերու մեծարանքի այդ երեկոյին, որովհետեւ անկիկ կը շարունակէր իր մէջ վառ ու կենդանի պահել Յայոց ցեղասպանութեան ոգին եւ իրայրքը, որքան ալ ժամանակներն անցին, բայց անոնք կը մնան հայ ժողովուրդին համար անմահ հերոսներ ու ռահվիրաներ, հետագայ եւ այժմու սերունդներուն համար դառնալով օրինակելիութեան, հաւատարմութեան եւ մեր ազգային կառնածութեան եւ ինքնութեան հզօր եւ անշքելի կոռուսներ:

Այս ոգին ու տեսիլքը կը թեւածին ունկնդիր այն հասարակութեան մօտ, որ փութացած էր իր յարգանքի տուրքը մատուցանելու եւ մասնակից դառնալու ոգեկոչման հոգեցունց ու հոգեզմայլ բուխ յայտագրի ընկալման:

Հանդիսութեան բացումը կատարեց Գեորգ Տաղլեան, իմաստալի եւ ոգեկոչելի խօսերով:

Ուրախալի ու հպարտալի էր, որ մեր ազգային կառնոցները հաւատարիմ են իրենց նախնիներու հերոսական-ազատագրական պայքարներուն եւ այդ հեռանկաներով ալ կը մնան կանգուն ու հետեւողական, որպէսզի հայ կուսակցութիւնը, յատկապէս իր երիտասարդական կորիզներով ու շարքերով, շարունակեն իրենց երթը, ինչ որ ակնյայտ էր ինչպէս անհերքելի այս հանդիսութեան ընդմէջէն, ի տես թե՛ գաղափարակիցներու, թե՛ համագործակիցներու, թե՛ համակիրներու, թե՛ երիտասարդութեան մօտ, որոնք անխառն հպարտութեամբ, անսպառ ուժականութեամբ եւ անսահման հասկացողութեամբ կը յարգեն ու կը մեծարեն իր այդպիսի-գաղափարական կեանքին մէջ, գոյակեցութեան, յարատեւութեան եւ իրաւապահութեան մէջ, մեծ ներդրում կատարած անմահացածները, ինչպէս՝ ԶՍԱՆ ԿԱՆԱՂԱՆԵՐՈՒ կերտիչները:

Ազգային-հոգեկան այս վայելքն էր, որ պարզուեցաւ այդ օր, երբ ինքնուրու, կոկիկ ու բովանդակից յայտագիրով մը ԶՍԱՆԵՐՈՒ կենդանացան եւ կենդանացոցին ներկաները, իրենց ելոյթներով, սրտաբուխ դերերով, ու մասնաւոր՝ ազգաշունչ երգերով, որոնք ընկերակցեցան նաեւ հանդիսականները, շնորհիւ հայ երաժշտութեան եւ արուեստի մեներգիչ ու խմբավար Յովիկ Թափրասեանի:

ՄԴԿՎ Վարիչ մարմինի ատենապետ Վանիկ Տաղլեանի ու Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչ Ալեքսան Զեօշկերեանի ելոյթները լաւագոյն թարգմանը հանդիսացան ԶՍԱՆԵՐՈՒ անգին եւ անշքելի ուղիներու ձգած անանդին ու կտակուած ժառանգութեան, համապարփակ ու պերճախօս մտորումներով ու դիտարկումներով, վերլուծումներով ու մեկնաբանութիւններով, լոյս սփռելով ոչ միայն ԶՍԱՆԵՐՈՒ ազգային-պատմական յանձնառութեանց վրայ, այլեւ՝ ապրելով ու վերապրեցնելով անոնցով, որոնք, իրօք, դարձան բարենշային արժանիներ:

Չեկուցող պատգամախօսներուն մօտ նոյնքան ուշագրաւ եւ գնահատելի էին անոնց այժմեական անդրադարձները մեր ծննդավայր-Լիբանանին ու մեր հայրենական իրավիճակին մասին խորհրդածութիւններով, որոնք իրապատական էին, զուսպ, հաւասարակշռեալ, հաղորդական, տիրող պատկերները ներկայացնելով իրենց իսկական հուսալուրովներուն ու զարգացումներուն ընդմէջէն:

Շնորհաւորելի եւ կազմակերպիչները, նաձեռնողները եւ, ընդհանրապէս, ձեռնարկին մասնակցիները, մաղթելով որ այս եւ այլ ազգային նշումներով միշտ կը մնան թե՛ մեր մտածումներուն, թե՛ մեր հոգիներուն մէջ:

# ՀԻՆԳ ԴԱՐԱՇԵՐՋԱՆ, ՀԻՆԳ ՃԱԿԱՏԱԳԻՐ Թագուհիներ, որոնք պատմութիւն կերտեցին

ԱՆԻ ԹՈՐԱՆԵԱՆ (Երեւան)

Եր: Անոր երկու աւագ քոյրերը նոյնպէս օժտուած էին իւրօրինակ շնորհներով՝ մէկը բժշկուհի էր, միւսը՝ հեթանոս քրմուհի:

Լիպուշէ օժտուած եղած է կանխատեսելու եւ ապագան գուշակելու պայծառատեսութեամբ:

Հօր մահէն ետք, շնորհիւ իր իմաստութեան, ան կը ժառանգէ իշխանութիւնը եւ շատ չանցած յայտնի կը դառնայ իր արդար դատաւճիռներով:


Անոր նշանաւոր մէկ տեսիլքը կապուած է Պրահայի ստեղծման հետ: Վիշեհարատ ամրոցի ժայռեղէն բարձունքէն ան Վլուա գետին նայած ու կանխատեսած է՝ «Ես մեծ քաղաք մը կը տեսնեմ հոս, որուն փառքը պիտի դպչի աստղերուն»: Անոր հրամանով հիմնուած է այն քաղաքը, որ այսօր բոլորիս յայտնի Պրահան է:

Հակառակ Լիպուշէի իմաստութեան եւ ողջախոհութեան, ցեղի այրմարդիկ դժգոհ էին կին առաջնորդէն եւ կը պահանջէին, որ ան ամուսանանայ:

Լիպուշէ կը յայտնէ տեսիլքի մը մասին, ըստ որուն՝ իր ամուսինը պէտք է դաշտերը հերկող եւ ճաշը երկաթ սեղանէ ուտող սովորական հողագործ մը ըլլար: Որոնումները կը տանին Սթափից գիւղ, ուր կ'ապրէր Փրօմիւլ Երկրագործը: Վերջինս կը ձգէ իր գութանը, կ'ամուսանայ Լիպուշէի հետ եւ նոյնիստայն հիմը կը դրուի Փրօմիւլովիչներու հարստութեան, որ շուրջ 400 տարի կը կառավարէ Պոնտիան:

Լիպուշէ ոչ միայն ապագայ քաղաքներ կը կանխագուշակէր, այլեւ իր ժողովուրդին ցոյց կու տար երկրին բնական հարստութիւններուն տեղերը:

Չիտերը գայն կը համարէն իրենց ազգային ինքնութեան, կանացի ուժի եւ պետականութեան խորհրդանշանը: Շատ մը արուեստագետներ ոգեշնչուած են անոր կերպարով, մասնաւորապէս չիտ աշխարհահռչակ երաժշտ-երգահան Սմեթանա, որ անոր ձօնած է իր համանուն «Լիպուշէ» օփերան:



Ոչ միայն վրաց, այլեւ ամբողջ միջնադարեան պատմութեան մէջ բացառիկ երեւոյթ է **Թամար թագուհին**: Անոր ղեկավարութեան օրօք Վրաստանը հասաւ իր քաղաքական ու մշակութային վերելքի գագաթնակէտին, եւ գուր չէ, որ վրացիները այդ դարաշրջանը մինչ օրս կը կոչեն «ոսկեդար»:

Անոր առաջին ամուսնութիւնը ռուս իշխան Եուրի Պոկոլիկսքիին հետ քաղաքական նպատակ կը հետապնդէր, բայց երկար չտեսնեց: Ըստ վրաց տարեգրութիւններու, Եուրի բռն ու անկանոն վարքի տեր ըլլալուն, Թամար միջնադարեան աշխարհի համար բաւական արտառոց քայլի դիմեց ու բաժնուեցաւ անկէ:

Այնուհետեւ Վրաց թագուհին ամուսնացաւ Դաւիթ Սուլանի հետ, որ իսկապէս գորավար ըլլալուն զուգահեռ դարձաւ կնոջ հաւատարիմ գործընկերը: Այդ միութեան լոյս աշխարհ եկան Գեորգ Դ. Լաշա եւ Ռուսուտա:

Սակայն կարելի է նշել, որ ամուսնութեանն էտք ալ, երկրին գլխաւոր ղեկավարը մնաց Թամարը: Ճիշդ է, մեծ էր Դաւիթ Սուլանի ազդեցութիւնը ռազմական հարցերուն մէջ, բայց գահակալ միայն թամարն էր:

Թամար թագուհին մասին մեծ յարգանքով կը խօսին նաեւ հայ միջնադարեան արքիւրները, որովհետեւ անոր օրօք հայ իշխանական տուները՝ յատկապէս Չաքարեանները, մեծ դեր խաղան այդ տարածաշրջանին մէջ: Չաքարէ եւ Իււանէ Չաքարեանները դարձան Թամար թագուհին ամենէն յուսալի եւ կարելի ռազմա-քաղաքական յենարանները: Անոնց ղեկավարութեամբ ազատագրուեցան Յայաստանի հիւսիսային ու կեդրոնական բազմաթիւ քաղաքներ՝ Անին, Դուինը, Կարսը եւ այլք: Այդ շրջանին տուր վերելք ապրեցաւ հայկական մշակոյթը, կառուցուեցան վանքեր, գրուեցան ձեռագրեր, զարգացաւ մանրանկարչութիւնը: Այդ շրջանը յաճախ նկատուած է Յայաստանի «վերածնունդի» փուլերէն մէկը:

Պատմութիւնը, սակայն, տարբեր ժամանակներու մէջ տարբեր ընթացք կը ստանայ: Կը պատահին թե՛ մերձեցումներ, թե՛ լարուածութիւններ, թե՛ համագործակցութեան շրջաններ:

Կրաց Թամար թագուհին (կառավարած է 1184-1213) առաւելաբար նշանաւոր է իր պետութեան տարածքը անախաղէպ ընդլայնելու համար: Անոր ղեկավարութեան տարիներուն երկիրը դարձաւ տարածաշրջանի գերիշխան ուժերէն մին: Կրաց պետութեան սահմանները տարածուեցան Սեւ ծովէն Կասպից ծով՝ իրենց ազդեցութեան գոտիին մէջ պահելով նաեւ Հիւսիսային Կովկասը: Նշանաւոր է 1195-ի Շամքորի ճակատամարտը, որուն, ըստ միջնադարեան արքիւրներու, աւելի քան 300.000 հաշուող իսլամական զաշինքին դէմ մղուած պայքարը աւարտած է փայլուն յաղթանակով:

Թամար թագուհին շրջանին զարգացաւ գրականութիւնը: Ծնաւ Շոթա Ռուսթաւելիի «Ընձենաւորը» պոէմը, որ, ըստ գրականագետներու, ամբողջութեամբ կ'արտացոլէ Վրաստանի «Ոսկեդարը» եւ Թամարի կառավարման շրջանը:

Պոէմին սկիզբը Արաբիոյ Ռուստեան արքան, որ տղայ զաւակ չուներ, իր ողջութեան գահը կը յանձնէ դստեր՝ Թինաթինին: Հոս ակնյայտ է պատմական զուգահեռը... Թամար թագուհին հայրը՝ թագաւոր Գեորգի Գ., որդի չունենալու պատճառով, 1178 թուականին Թամարը հռչակեց համագահակալ, որպէսզի ապահովէ կին միապետին անցումը գահին: Թինաթին ներկայացուած է որպէս իմաստուն, պետական մտածողութեամբ օժտուած, ազատ եւ ինքնուրոյն որոշումներ կայացնող կին, ճիշդ ինչպիսին Թամարն էր:

Կրաց ուղղափառ եկեղեցին Թամարը դասած է իր սուրբերուն շարքը եւ յատուկ տօն ունի, որ կը կոչուի՝ Թամարոպայ:



Պատմութիւնը յաճախ կը յիշէ թագաւորներ, զօրավարներ եւ կայսրեր, սակայն տարբեր դարաշրջաններու մէջ եղած են նաեւ կիներ, որոնք ոչ միայն մաս կազմած են պատմութեան, այլեւ փոխած են անոր ընթացքը: Անոնցմէ ոմանք առաջնորդած են բանակներ, ոմանք՝ պետութիւններ, ոմանք ալ՝ ժողովուրդներու երազանքներն ու ինքնութիւնը:

Մեր էջին համար ընտրուած էին թագուհիները կը ներկայացնեն կանացի ուժի հինգ տարբեր դրսեւորումներ: **Թագուհի Մետա** (հին իրլանտերէն՝ Medb, ժամանակակից անգլերէնով՝ Maeve) իրլանտական դիցաբանութեան ամենէն ազդեցիկ ու հզօր կերպարներէն է: Անոր գոյութիւնը որպէս պատմական անձ կարելի չէ հաստատել, սակայն ըստ արականութեան ապրած է Զ.Ա. Առաջին դարուն եւ եղած է Իրլանտայի գերագոյն արքայ Էոնիայտ Ֆեիլիւիսին դուստրը: Որոշ ուսումնասիրողներու կարծիքով, Մետա ի սկզբանէ եղած է ինքնիշխանութեան եւ պտղաբերութեան քելթ աստուածուհի:

Անոր հիմնական նստավայրը կը համարուէր Իրլանտայի արեւմտեան Կոնախթ Նահանգին Զրուախան քաղաքը: Հին իրլանտական օրէնքներուն համաձայն, կիները կրնային ունենալ սեփականութիւն, ազատօրէն ընտրել կամ ձգել իրենց ամուսինները, իսկ Մետա ամենավառ մարմնաւորումն էր այդ աստուածուհիներուն:

Մետա անուը թարգմանաբար կը նշանակէ «Արեցնող», իսկ կերպարը՝ կատարելատիպն է ռազմատենչ եւ անկասթա թագուհիի: Ըստ արականութեան, ոչ մէկ այրմարդ կրնար Զոնախի կամ Թարաի գահը բարձրանալ առանց Մետային հետ ամուսնութիւն կնքելու, բան մը, որ խորհրդանշական միութիւն էր երկրի եւ իշխանութեան հետ:

Այդպիսով ան ոչ միայն կ'ընտրուէր իր կողակիցները, այլեւ ազդեցութիւն ուներ իշխանութեան փոխանցման վրայ: Մետա յայտնի էր իր ռազմական տաղանդով, քաղաքական հեռատեսութեամբ եւ անկախ բնաւորութեամբ: Ան իր ամուսիններէն կը պահանջէր չըլլալ վախկոտ, խանդոտ կամ կծծի: Անձնապէս կը տնօրինէր իր հարստութիւնը, քաղաքական դաշինքներ կը կնքէր եւ բանակը կը ղեկավարէր՝ Զոնախոյը պահելով հզօր եւ հաւասար միւս թագաւորութիւններուն:

Մետայի կերպարը մինչ օրս կը մարմնաւորէ կանացի իշխանութեան, ազատ կամքի եւ ղեկավարելու գաղափարը:



**Բրիտանիոյ Պուտիքան** (մօտ 30 - 61 թթ.) եղած է քելթական Իցենի ցեղի թագուհին (ժամանակակից Արեւելեան Անգլիա) որ հուժկու ապստամբութիւն մը ղեկավարած է 60-61 թուականներուն, ընդդէմ Հռոմէական կայսրութեան տիրապետութեան: Անոր մասին որոշ տուեալներ մեզի հասած են երկու հռոմէացի պատմաբաններու՝ Թաքիտի (Tacitus) եւ Կասիոս Դիոյի (Cassius Dio) գրառումներուն շնորհիւ:

Երբ անոր ամուսինը՝ Փրատուքսոս կը մեռնի, Պուտիքա իր ունեցումները կը կտակէր երկու դուստրերուն եւ կայսր Ներոնին, յուսալով, որ այդ քայլով պաշտպանած կ'ըլլայ իր ընտանիքը: Հռոմէացիները սակայն, կ'անտեսեն կտակը, կը բռնազրաւեն հողերը, ծծի կ'ենթարկեն Պուտիքան եւ կը բռնաբարեն անոր դուստրերը:

Այդ վայրագութիւններուն ի պատասխան, Պուտիքա ապստամբութեան կոչ կ'ուղղէ իր ցեղակիցներուն եւ դրացի այլ ցեղերու: Կազմուած միացեալ բանակը կ'աւերէ եւ կրակի կը մատնէ երեք հռոմէական խոշոր քաղաքներ, որոնց կարգին՝ Լոնտինիում (այժմու Լոնտոնը), եւ երկու այլ քաղաքներ: Կը սպաննուին տասնեակ հազարաւոր հռոմէացիներ եւ անոնց համախոհները:

Պատմաբան Կասիոս Դիօ Պուտիքան նկարագրած է որպէս շատ բարձրահասակ, վայրի, կրակոտ՝ սուր հայեացքով, սպառնական կեցուածքով վեհաշուք կին: Ան ունեցած է մինչեւ գօտկատեղը հասնող շիկակարմիր մազեր, կրած է մեծ ոսկէ վզնոց եւ գունագէտ թիկնոց:

60 կամ 61 թուականին հռոմէացի զօրավար Գայոս Սվետոնիոս Փաուլինուսին դէմ վճռական ճակատամարտի ընթացքին (որ աւելի յայտնի է «Ուալթիլն փողոցի ճակատամարտ» անունով) Պուտիքայի զօրաբանակը կը ջախջախուի: Պատմական աղբիւրները կը տեղեկացնեն, թէ գերութեան խուսափելու համար ան թոյն խմած եւ մեռած է: Պուտիքա քելթերէնէ թարգմանութեամբ կը նշանակէ «Յաղթանակ»:

Դարեր ետք, մասնաւորաբար Վիքթորեան դարաշրջանին, Պուտիքան դարձաւ բրիտանական ազգային հերոսուհի եւ պայքարի, անկախութեան ու կանացի ուժի խորհրդանշան: Այսօր Լոնտոնի Ուեսթմինսթըրեան կամուրջին վրայ կանգնած կը տեսնենք անոր մարտկառքով յայտնի պրոնզէ արձանը:

Պատմութիւնը երբեմն կը հիւսէ առասպելներ, որոնց հիմքը, յաճախ, իրական է: Այդպիսին է առասպելական այն արքայադուստրը, որ մինչ օրս կը մեծարուի իմաստութեամբ ու մարգարեութեամբ օժտուած ըլլալու, չքնաղ Պրահան եւ Չիտիոյ առաջին ազգային հարստութիւնը հիմնած ըլլալու համար:

**Լիպուշէ**: Կ'ըսուի, թէ ան Պոնտիան ղեկավարած է 700-738 թուականներուն եւ յաջողած է կանխել անոր բաժանումը:

Ըստ չիտական աղբիւրներու, ան չիտ դիւցազն-առաջնորդ Զրոքի կրտսեր, բայց իմաստուն դուստրն

# ԸՆԿԵՐ ԱՆԴՕՆ... ԵՒ ԵՐԹԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Սուրիոյ երկարամեայ պատերազմը կործանարար հարուած հասցուց սուրիահայ գաղութին, իսկ Լիբանանի տնտեսական փլուզումը, դրամատնային ճգնաժամը, ապահովական խնդիրները հազարաւոր հայ երիտասարդներ մղեցին արտագաղթի:

Երբեմնի տասնեակ հազարաւոր հայ բնակչութիւն ունեցող միջինարեւելեան մեր գաղթօճախներուն համար այս իրողութիւնը անշուշտ ծանր եւ մտահոգիչ հետեւանքներ ունեցաւ: Սակայն նոյն այս հոսքը, հակառակ իր ցաւալի բնոյթին, նոր շունչ ու կենսունակութիւն բերաւ Սփիւռքի այլ գաղութներու, մասնաւորաբար աստրալիահայ համայնքին, որ վերջին տարիներուն զգալիօրէն հարստացաւ ազգային գիտակցութեամբ, կազմակերպական փորձառութեամբ եւ ծառայութեան ոգիով զինուած երիտասարդ ուժերով:

Այդ երիտասարդներէն մէկն է ընկեր Անդրանիկ Կիւլվարդեանը, որ կը ճանչնամ դեռ Պէյրութի Նոր Զանգն թաղամասէն եւ որուն ազգանունը ու բարերար գործունէութեան մօտէն ականատես եղայ նաեւ Սիտնիի մէջ:



Զանգնի համեստ ընտանիքի միակ գաւազնը՝ Անդրանիկը, ծնաւ ու մեծցաւ Նոր Զանգնի մէջ, մեր բոլորին աչքին առջեւ: Ան թաղամասին սիրելի մանուկն էր, որուն հանդէպ բոլորս առանձնայատուկ գուրգուրանք ունէինք: Օպտաղէմ, բարեկիրթ եւ համակրելի իր նկարագիրով՝ ան շուտով դարձաւ շրջապատին սիրուած դէմքերէն մէկը:

Թաղամասի ազգային եւ միութենական աշխոյժ կեանքին մէջ մեծնալով՝ ան աստիճանաբար կազմաւորուեցաւ, աւարտեց ազգային վարժարանները եւ ամենայն լրջութեամբ ու պարտաճանաչութեամբ մասնակցեցաւ պատանեկան եւ երիտասարդական շարժումներուն, որոնց մէջ կոփուեցաւ կազմակերպուած աշխատանքի եւ հաւաքական ծառայութեան ոգիով:

Ան եղաւ Ս.Գ.Յ.Կ. «Տիրուհի» Ուս.-Երիտ միութեան աշխոյժ անդամներէն մէկը, ապա ստանձնեց փոխատեսակցութիւն եւ գանձապահի պաշտօնները:

Յետագային իր մասնակցութիւնը ընդարձակուեցաւ մասնաճիւղային ծառայութեան տարբեր բնագաւառներու մէջ, իր անմիջական ներդրումը բերելով «Միրայր Մուրատ» մասնաճիւղի տնտեսական վիճակի բարելաւման աշխատանքներուն:

## ՆԱԶՕ Ե.

տանքներուն, օգտակար հանդիսանալով ոչ միայն Յ.Ս.Մ.-ին, այլ նաեւ Սահակեան Գոլեճին, «Արարատ» օրաթերթին եւ ընդհանրապէս կուսակցական ու ազգային կառոյցներու բազմաթիւ նախաձեռնութիւններուն:

2023-ի Փետրուարին Անդրանիկը գաղթեց Աստրալիա: Սակայն նոր երկիր տեղափոխուելը չնուազեցուց իր ազգային եռանդը: Ընկեր Անոն ձեռնածալ չմնաց, չընտրեց անձնական հանգիստի ճանապարհը եւ չսահմանափակուեցաւ սեփական կեանքի հոգեբով: Ընդհակառակը, ան շարունակեց իր կուսակցական եւ միութենական գործունէութիւնը նոյն նուիրումով, որ կերտուած ու կոփուած էր Լիբանանի Ս.Գ.Յ.Կ.-ի կազմակերպչական դաշտին մէջ: Իր ազատ ժամերը նուիրեց Սիտնիի ազգային-հասարակական կեանքին՝ նոյն պատրաստակամութեամբ ու խանդավառութեամբ, որոնցմով ծառայած էր անցեալին: Այսօր ան Սիտնիի «Նոր Սերունդ» Մշակութային Միութեան վարչութեան դիւանապետն է, իսկ Ս.Գ.Յ.Կ.-ի Աստրալիոյ շրջանի Վարիչ մարմինին մէջ կը վարէ ատենադպրութեան պաշտօնը:

Ընդամենը երեք տարիէ ի վեր կը բնակի Սիտնիի մէջ, սակայն այս համեմատաբար կարճ ժամանակաշրջանին ընթացքին կրցած է համարելու ուսումը, անձնական յաջողութիւններն ու ազգային ծառայութիւնը: Ան համալսարանաւարտ դարձաւ, ամուսնացաւ եւ ընտանիք կազմեց: Աւելին, ընդամենը ամիս մը առաջ հայրութեան բերկրանքը ապրեցաւ տղայ գաւազնի՝ Աւետիսին ծնունդով:

Անշուշտ, երբ կը դիտենք Սիջին Արեւելի մեր պատմական գաղութներու շարունակուող նօսրացումը, մեր սիրտը բնականաբար կը մղկտան, իսկ հոգիները կը ճմլուին: Սակայն միեւնոյն ժամանակ, երբ կը տեսնենք ընկեր Անդրանիկ Կիւլվարդեանի նման բազմաթիւ երիտասարդներ ու երիտասարդուհիներ, որոնք իրենց հետ «ծովերէն անդին» կը փոխադրեն ոչ միայն իրենց ճամպուկները, այլ նաեւ ազգային գիտակցութիւնը, կազմակերպական փորձառութիւնն ու ծառայութեան կամքը, մեր հոգիներուն մէջ սփոփանքի ալիք մը կը ծագի:

Այս սերունդն է, որ նոր թթուածին կը ներարկէ «արեւմտեան» կեանքին: Այս սերունդն է, որ կարծես կենարար շիճուկ («սերուն») մը կը հասցնէ աշխարհի ամենահեռաւոր անկիւններուն մէջ դանդաղօրէն մարդկային կեանքին: Անոնք են, որ նոր իմաստ կու տան համայնքային կեանքի շարունակականութեան:

Ընկեր Անոն այդ երիտասարդներէն մէկն է: Իր ծառայութեան եւ նուիրումին ականատես եղած ըլլալով՝ փափաքեցաւ այս քանի մը տողերով գնահատանքի արձանագրութիւն մը ձգել այն իսկ օրաթերթի էջերուն մէջ, որուն հանդէպ ան տարիներ շարունակ իր բարոյական պարտականութիւնը կատարած է լռելեայն, առանց աղմուկի, բայց՝ ամբողջ նուիրումով:

Որովհետեւ ծառայութիւնը, ի վերջոյ, պաշտօն կամ կոչում չէ միայն. ան ապրելակերպ մըն է: Իսկ ընկեր Անդրանիկ Կիւլվարդեանը հեռաւոր Սիտնիի մէջ այդ ճշմարտութեան գեղեցիկ օրինակներէն մէկն է:

## ՀԻՆԳ ԴԱՐԱՆԵՐՁԱՆ, ՀԻՆԳ ՃԱԿԱՏԱԳԻՐ

### Շարունակուած էջ 2-էն



Փոքր չէ մեր պատմութեան մէջ հայ թագուհիներուն դերը: Անոնցմէ շատեր արժանի են յիշատակման, բայց մեր ընտրութիւնը կանգ պիտի առնէ **Չապէլ թագուհի**ի վրայ, որուն կառավարման շրջանը հայոց պատմութեան ամենէն տրամաթիք, միաժամանակ ամենէն կայուն էջերէն է: Ան ոչ միայն պետութեան խորհրդանիշ, այլեւ միակ կրողն էր Կիլիկիոյ հայկական օրինական թագաւորութեան:

Չապէլ, դուստրը Կիլիկիոյ հզօրագոյն տիրակալ Լեւոն Բ. Մեծագործի, ծնած է մօտ 1216 թուականին: Արու ժառանգ չունենալուն, մահէն առաջ Լեւոն թագաւոր մանկահասակ Չապէլը հռչակեց գահի օրինական ժառանգորդ, որպէս ինստաւակալ նշանակելով սպարապետ Կոստանդին Պալը:

Երկրին անկախութիւնը պահպանելու համար, 1222-ին Չապէլը (մօտ 6 տարեկանին) կ'ամուսնացնէ Աստիոքի դուքսի որդի՝ Ֆիլիպի հետ: Սակայն Ֆիլիպի արիամարհանքով կը վերաբերի հայկական սովորոյթ-աւարոյթներուն, արքունիքէն կը հեռացնէ հայ իշխանները եւ թագաւորական գանձերը գաղտնի կը տեղափոխէ Աստիոք:

Յոս, ի յայտ կու գայ Չապէլին քաղաքական կամքը: Յայ իշխանները կը ձեռնարկեն Ֆիլիպի, իսկ երիտասարդ Չապէլ, հաւատարիմ երկրի շահին, չի պաշտպաներ ամուսինը: Տարի մը ետք Ֆիլիպ կը մեռնի բանտին մէջ, իսկ պատանի Չապէլ կը ցուցաբերէ ոչ թէ տկարութիւն, այլ բարձրագոյն պետական գիտակցութիւն:

1226 թուականին ինստաւակալ Կոստանդին Պալը դիմէ հանճարեղ քաղաքական քայլի՝ կը կազմակերպէ իր գաւկիսի՝ Յեթումի ամուսնութիւնը Չապէլին հետ, որ նախ կը դիմարդէ, կը փախչի Սիսեւ, կ'ապաստանի Սելեւկիա ամրոցը՝ փորձելով ինքնուրոյն որոշել իր ճակատագիրը, բայց յետոյ կը յաղթէ իր ներքին «ես»-ին, եւ յաջողաբար հայրենիքի խաղաղութեան կը կանգնի խորանին առջեւ:

Կոստանդին պայլին այս քայլը միաւորեց երկու թշնամի տոհմեր՝ Ռուբինեանները (Չապէլին տոհմը) եւ Յեթումեանները, այդպիսով վերջ դնելով ներքին երկպառակութեան: Նոր իրավիճակը օգնեց, որ Կիլիկիան դիմարդէ մտնելուական արշաւանքներուն:

Ճիշդ է, որ Յեթում դարձաւ թագաւոր (Յեթում Ա.), բայց ան իր իշխանութիւնը ստացաւ բացառապէս շնորհիւ Չապէլի օրինական գահին: Անոնց համատեղ կառավարումի 43 տարիները եղան երկրի տնտեսութեան եւ մշակոյթի ծաղկման տարիներ: Այդ շրջանէն պահպանուած արձայն դրամներուն վրայ պատկերուած են երկուքը միասին՝ ձեռքերնին խաչ, իսկ դրամի դարձերեսին՝ ուժի, ինքնիշխանութեան եւ արքայական արժանապատուութեան խորհրդանիշ թագակիր առիւծն է, որ թաթով բռնած է խաչաձեւ ձող մը (պատրիարքական խաչ):

Անոնք ունեցան ուր գաւակ, որոնցմէ Լեւոն Գ. ժառանգեց գահը:

Չապէլ եղաւ օրինականութեան, ներդաշնակութեան եւ մշակութային վերածնունդի թագուհի:

Ան եղաւ միջնադարի այն եզակի թագուհիներէն, որ ոչ միայն դրամ կը յատկացնէր բարեգործութեան, այլեւ իր կառուցած հիւանդանոցին մէջ անձամբ կը հետեւէր հիւանդներու ինսամքին:

Չապէլ պահպանեց իր իրաւունքները եւ իր անձնական կեանքը դիտարկեց բացառապէս պետական շահի ուսպնակով: Անոր ձօնուած ամենէն նշանաւոր եւ բարձրարուեստ գործը հայ կերպարուեստի գլուխգործոցներէն՝ Վարդգէս Սուրենեանցի «Չապէլ թագուհիին վերադարձը գահ» կտան է, որ նկարիչը վրձնած է 1909-ին:

Մեր հերոսուհիները մեկտեղող ամենէն հուժկու կապը այն է, որ անոնք կը յիշուին ոչ միայն որպէս իրենց երկիրներու կառավարիչներ, այլեւ որպէս կիներ, որոնց ճակատագիրը անբաժանելի կը մնայ իրենց ազգի ճակատագրէն:


\*\*\*

Մետաքի ռազմատենչ կամքէն մինչեւ Չապէլի պետական իմաստութիւն, այս հինգ թագուհիները կ'ապացուցեն, որ իշխանութիւնը չի ճանչնար սեռ: Դարերու հեռաւորութենէն աննք մեզի կը յուշեն, որ ազգերու ճակատագրին մէջ երբեմն վճռորոշ դերը այն կիներունն է, որոնք համարձակութիւն կ'ունենան պատախաճանատուութիւն ստանձնելու իրենց ժամանակի ամենէն դժուար պահերուն:

# ԱՐԱՍ ՀԱՅԿԱԶԻ «ՀԱՆՏՈՒԻՄ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ» ՎԵՐՆԱԳՐՈՒՄՍ ՊԱՏՄՈՒԱԾՔԸ

## ՅԱՐՈՒԹԻՆ ԻՍԿԱՅԱՏԵԱՆ

«Չորս տարի Զիրտիստանի լեռներուն մէջ»... Մեծ եղեռնի տարիներուն իր կեանքի յուշագրական վէպին հեղինակը՝ Արամ Յայկազը Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ լոյս ընծայած է «Ապրող ծառ մը» խորագիրով գրական գործ մը, որ հետագային վերահրատարակուած է Յայաստանի Զանգապետութեան մէջ ու անոր հրատարակչական տունէալներն



են. -Գրական Յայրենիք ՓԲԸ - «Յայաստան» հրատարակչութիւն, Երեւան, 2012, միջակ չափի 320 էջ: Անկէ կը ներկայացնենք «Յաշտուիմ Աստուծոյ հետ» վերնագրուած պատմուածքը (էջ 311-315)

Սկիզբը՝ «Կ'ուզեմ որ սերունդները կարդան, թէ թուրքը՝ մարդկութեան ու քաղաքակրթութեան անսրբագրելի ամօթը, ինչ անորակելի չարիք կամեցաւ մեր ցեղին», - կը գրէ Արամ Յայկազ:

Ամերիկայի մէջ Արամ Յայկազի դրացուհին՝ վերապրող ծերունի Նոյնմին է, որ իր տեսածներն ու ապրածները կը պատմէ անոր:

Նոյնմի իր 27 հոգիանոց ընտանիքին հետ կարաւանով Սուրիոյ անապատները կը հասնի երկուքուկէս ամիսէն: Ծամբայ չէլած՝ թուրքերը տղամարդիկը տարած ու սպաննած էին: Անապատին մէջ գիշերները ցուրտ էր, իսկ ցերեկները շատ տաք կ'ընէր: Անօթի եւ ծարաւ վիճակի մասնուած՝

# ՆԿԱՐԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

## ԶԱՐՄԻՆԵ ԿԱՆԱԶԵԱՆ ԱՍՄԻՆԵԱՆ

Հայը տիրել է ձիրքերով, ճարտարարուեստով, արհեստներով եւ արուեստներով, ինչպէս պիտի ըսէր մեր մեծ բանաստեղծ Պարոյր Սեւակ

Յաճախ կը լսենք արտայայտութիւններ լուսանկարներու մասին:

Յարգանքի իբրեւ նշան մեր տան պատէն կախած ենք գերդաստանի երկու մեծերու նկարները: Իրենք կեանքէն հեռացած են, սակայն անոնց նկարը կը մնայ յիշատակ:

Իբրեւ յիշատակ նկարներ կը փոխանակենք:

...Նիւթ մը, պատմութիւն կը կը հարստանայ որպէս վաւերագրութիւն իր նկարներով:

Լուսանկարչական արուեստը այսօր համաշխարհային մակարդակով զարգացում կ'արձանագրէ: Կը կազմակերպուին անձնական եւ խմբային ցուցահանդէսներ: Լուսանկարիչներ կան, որոնք ունենալով արուեստագետ ճաշակ, հմտութիւն եւ վարպետութիւն, կը ստանան մրցանակներ:



Invitation to an Exhibition by Martin Stöbich Opening on Thursday 30th of September 2010 at Taxelet from 6pm to 9pm. Tickets will open on this occasion for dinner at 8 pm. For reservations please call 01 44 81 29. The exhibition will continue until the end of November. Opening hours 9 am to 6 pm. Tickets open for lunch.

Տարիներ առաջ հօրս խանութը այցելած էր եւրոպացի լուսանկարիչ մը՝ Մարթին Սթոյպիչ անունով, եւ ինքզնիքը անոր արհեստանոցը նկարել: Սկարիչին թիրախը եղած է Մար Մըխայէլ շրջանի վեց արհեստանոցները:

Ըստ հին արհեստարարներու սովորութեան՝ ինք գանազան նկարներով իր պատերը զարդարած էր: Կային հայ մտաւորականներու, գործընտրու, երգիչներու, մարզիկներու, գծագրիչներու, հեռաւոր ընկերներու նկարները, ինչպէս՝ Պարոյր Սեւակ, Կոմիտաս, Շարլ Ազնաւուր, Գոհար Գասպարեան,

Այս դժուար պահերուն, մեր Դարձանատունը կը շարունակէ կարիքաւորին կողքին կանգնի: Այսօր մենք ձեր աջակցութեան պէտք ունինք՝ մեր առաքելութիւնը շարունակելու համար:

Կրնաք նուիրատուութիւն կատարել Whish հայտով եւ օգնել մեզի որպէս շարունակելու ինչպէս եւ անհրաժեշտ ծառայութիւնները մատուցելու մեր գաղութին:

Իրաքանչիւր ներդրում, ինչքան ալ փոքր ըլլայ, նպատակն է կը ծառայէ:

Միասին կրնանք յուր վառ պահել:

Whish MONEY 71/356035

Շնորհակալութիւն Ձեր ազ նուիրութեան եւ օժանդակութեան համար: Միասին անկի գործարար ենք:

# ԱՐԱՍ ՀԱՅԿԱԶԻ «ՀԱՇՏՈՒՄ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ» ՎԵՐԱԿՐՈՒԹՎ ՊԱՏՈՒԿՆԵՐ

Շարունակում էջ 3-ին

բռնագաղթելները մահացած հայ տարագրելներու միսը կ'ուտեն, ամեն օր որոշ թիւով դիակներ պահելով սայլերով մեռելներ հաւաքողներէն: Ամբողջ ընտանիքէն Նոյեմին ու անոր եղբայրները թոշակներն ողջ մնացած էին: Նոյեմի կը կարծէր, թէ թոշակներն չէր կրահեր, որ ինչ միս կ'ուտեն: Անմարդկային կենսապայմաններուն ու անսովոր «անուն»ին պատճառով, աղջնակը օրէ օր կը հիւծէր: Կանխագաղթող իր ալ մտալուտ վախճանը, օր մը ան կը խնդրէ մեծ մօրմէն: «Մեծ մայրիկ, երբ ես մեռնիմ, միսս մէկուն մի՛ տար, դուս միանկը կըր...»:

Այս գարհուրելի յուշերը լսած ու գրի առած հեղինակը՝ Արամ Յայկազ չի կրնար գապել իր զգացումները եւ թուրքին համար կ'ըսէ, թէ ան շնչաւորներուն ամենէն վայրագն ու ստորինն է... Նոյեմի թոշակներն կը մահանայ եւ Նոյեմին անմխիթար կը մնայ ու քնն կը պահէ Աստուծոյ նկատմամբ: «Ապրելէ ի՞նչ հասկցանք, որ մահէն վախանալ...», - կ'ըսէ ան: Իր մահուան անկողինին մէջ, Նոյեմի հեկեկալով իր ընդվզումը կ'արտայայտէ: «Վերջին ճիկերիս կտորին մահը տեսնելու ետք չեմ գիտեր Աստուած ինչո՞ւ չառաւ իմ հոգիս ալ...»:

Իր ամբողջ կեանքին ընթացքին Նոյեմի Աստուծոյ չէր հաւատացած, Անոր հետ չէր յարաբերած, ու հիմա, երբ կը զգար, թէ պիտի մեռնէր, հարց կու տայ Արամ Յայկազին ու ինքն իրեն: «Յաշտուի՞մ Աստուծոյ հետ...»:

# ՆԿԱՐԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Շարունակում էջ 3-ին

Փարամագ, Տիրուհի, Յրակ Տիկ, Բեկիմին Ժամկոչեան, «Արարատ» խումբին նկարներն ես այլևս...: Սեղանին վրայ միշտ ներկայ էր հայկական թերթեր, յատկապէս՝ «Արարատ» օրաթերթը: Կային գոյնզգոյն դերձաններ, կաշիի կտորներ, գամ, սօսիկից տեսակներն ես այլևս: Զանի մը օր ետք, այդ լուսանկարիչը կրկին կը վերադառնայ հօրս քով, իր հետ բերելով արհեստանոցի մեծ նկարը եւ կը բացատրէ, թէ այդ նկարը գետնից է ցուցահանդէսի հրաւիրատուին վրայ: Ցուցահանդէսը տեղի պիտի ունենար 30 Սեպտեմբեր 2010- ին: Լուսանկարը հօրս կը նուիրէ, Նոյեմի շնորհակալութիւն կը յայտնէ, որ զինք չէր մերժած:

Իսկապէս հիացած էինք անոր լուսանկարչական արուեստով: Արդարեւ, հրաւիրատուին վրայ գրած էր անգլերէնով: Ո՛վ չի գիտեր, թէ հայերը լաւ արհեստաւորներ եղած են եւ ուր որ ալ գտնուած են միշտ իրենց ներդրումը ունեցած են տունէլ երկրի բարգաւաճման ու զարգացման մէջ:

Լիբանանցին միշտ ալ լաւ արտայայտուած է՝ հայ ժողովուրդին մասին, թէ ստեղծագործող էր շախատասեր է, մեծ դեր ունեցած է Լիբանանի բարգաւաճման մէջ:

Իբրեւ հայ մնացած ենք կանգուն եւ տակաւին պիտի գոյատեւենք ու շատանանք: Զօրս մահէն ետք պրպտեցի եւ համացանցէն գտայ Մարիին Սթոպիլը: Անոր բացատրեցի ո՞վ ըլլալս եւ առաջին հարցումը եղաւ. «Յայտը տակաւին ո՞րը է»: Պատասխանեցի որ ան դժբախտաբար կեանքէն հեռացաւ: Երկրորդ հարցումը՝ «Իսկուրդ գո՞յ է», ըսի թէ վերածուած է փոքրիկ տակաւի մը:

Ան շատ ափսոսաց: Զօրս արհեստանոցէն գտաւ գտայ նաեւ միւս արհեստանոցներու նկարները:


# ԼԻԲԱՆԱՆ-ԻՍՐԱՅԷԼ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԸԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Շարունակում էջ 1-ին

համաձայնագիրը, պահանջելով որ վարչապետը այդ մասին քուէարկութիւն կազմակերպէ կառավարութեան մէջ: Ընդդիմութեան առաջնորդ Եսիր Լափիտ նշեց, որ Լիբանանի եւ Իրանի վերաբերեալ համաձայնութիւնները հակասական են:

## ԱՐՏԱՔԻՆ ՄԵՎՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Լիբանանի եւ Իսրայէլի միջեւ կնքուած շրջանակային համաձայնագիրն ու շարունակուող ոտնձգութիւնները արժանացան նաեւ արտաքին մեկնաբանութիւններու: Ֆրանսայի Արտաքին գործերու նախարարութիւնը պատրաստակամութիւն յայտնեց աջակցելու համաձայնագիրը գործադրելու ջանքերուն: Արաբական Միացեալ Էմիրութիւններու նախագահը հեռաձայնով խօսեցաւ իր լիբանանցի պաշտօնակիցին հետ եւ Ապու Տապիի աջակցութիւնը յայտնեց Լիբանանին: Եգիպտոսի եւ Զաթարի արտաքին



գործերու նախարարները ողջունեցին շրջանակային համաձայնագիրը, պահանջելով անյապաղ դադարեցնել իսրայէլեան գործողութիւնները եւ հեռանալ լիբանանեան հողերէն: Իրանի արտաքին գործերու նախարար Ալայաս Արազճի շեշտեց լիբանանեան բռնագրաւեալ շրջաններէն իսրայէլեան նահանջին անհրաժեշտութիւնը, զայն համարելով նաեւ ամերիկեան վարչակազմին պատասխանատուութիւնը: Իսլամական յեղափոխութեան գերագոյն առաջնորդի խորհրդական Ալի Աբպար Ուիլայաթի իր կարգին նշեց, որ «Յրգապալա վրանին հիմաստիւնն է, Լիբանանի գոյութեան եւ անկախութեան հիմնական գրաւակաւը»:

## ՄԱՐՏԵՐ ԵՒ ՈՒՐԱԿՈՇՈՒՄ

Առողջապահութեան նախարարութիւնը յայտարարեց, թէ իսրայէլեան յարձակումներուն հետեւանքով 2 Մարտին 28 Յունիս ժամանակաշրջանին Լիբանանի մէջ մահացած է 4.247 մարդ, վիրաւորուած՝ 12.195 ուրիշներ: Լիբանանի եւ Իսրայէլի միջեւ ստորագրուած համաձայնագիրը չհաղորցուց ռազմական գործողութիւնները, որոնք շարունակուեցան մասնաբաժնաբար Լիբանանի հարաւային բռնագրաւեալ



շրջանին եւ անոր մերձակալ գիւղերուն մէջ, ուր իսրայէլեան ուժերը շարունակեցին աւելի յառաջանալու փորձերը՝ կեդրոնանալով մասնաւոր Նապաթի մերձակալ Ալի Թահեր բլուրին եւ Ֆրուն գիւղին ուղղութեամբ: Եւ մինչ քանակը յայտարարեց նշեալ ռազմավարական բլուրը իր վերահսկողութեան տակ առնելու մասին, Յրգապալա հաղորդագրութեամբ մը հերքեց՝ նշելով, որ հակառակ ծանր մարտերուն, Ալի Թահեր կը մնայ իր տիրապետութեան տակ: Իսրայէլեան բանակը յայտարարեց Տեյր Սըրիանի մէջ իր սպաներէն մէկուն մահը, ապա Յրգապալայի անդամներու հետապնդումը, սպանութիւնը եւ Յրգապալայի շրջ մը դիրքերու ռմբակոծումը:

# ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԻԹ

**BIJOUTERIE GARO** հաստատութիւնը կարիքը ունի՝  
- Կարպետ ոսկերիչ ձեռնային աշխատանքի «սատեքը»  
- Փայլեցնող (ճիւղահի)  
- Matrix  
Պարզ Յամուտի հրապարակ, AUDI դրամատան շէք, առաջին յարկ:  
Սեփականատէր՝ Կարո Գրիգորեան  
Յեռաձայն՝ 03 207 772 - 01 266514

[www.araraddaily.com](http://www.araraddaily.com)

# ԸԱԼԵՊԻ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԲԺԻՇԿՆԵՐԷՆ ՏՈՔԹ. ՇԱՀԷ ՏԻՐԱՐԵԱՆ ԱՅԼԵՒՍ ՄԵԶԻ ԸՏՏ ԶԷ

Խոր ցաւով տեղեկացանք Յալէպի հայ համայնքի ճանչցուած բժիշկներէն՝ վաստակաշատ կրթական մշակ, հանգուցեալ Ռուբէն Տիրարեանի արժանաւոր որդիներէն եւ «Արարատ» օրաթերթի հաւատաւոր բարեկամ տղոջ. Շահէ Տիրարեանի մահուան մասին, որ պատահեցաւ Երեքշաբթի, 23 Յունիս 2026-ին, Երեւանի մէջ:



Յանգուցեալին հոգեհանգստեան արարողութիւնը կատարուեցաւ 25 Յունիս 2026-ին, իսկ յուղարկարութիւնը տեղի ունեցաւ Ուրբաթ, 26 Յունիս 2026-ին, Էջմիածինի Շահումեան գիւղի գերեզմանատան մէջ:

1956-ի ծնունդ բժ. Շահէ Տիրարեան ծնած էր Յալէպ, տէր եւ տիկին Ռուբէն եւ Արմինէ Տիրարեաններու յարկին տակ: Իր նախնական, միջնակարգ եւ երկրորդական ուսման փուլերը անցուցած էր Կիլիկեան վարժարանին մէջ, ուրկէ յաջողութեամբ շրջանաւարտ դարձած էր:

Բարձրագոյն ուսման համար մեկնած էր Մայր հայրենիք եւ ընդունուած՝ Երեւանի Պետական Բժշկական համալսարան եւ աւարտած էր 1984-1985 տարեշրջանին: Այնուհետեւ մասնագիտացած էր միզային եւ սեռային ուղիներու հիւանդութիւններու վիրաբուժութեան մէջ՝ դառնալով հմուտ «ուրոլոգ»-վիրաբոյժ: Իր գիտական աշխատանքներու եւ մասնագիտական թեզի պաշտպանութենէն ետք արժանացած էր «Գիտութիւններու Դոկտոր»ի բարձր տիտղոսին:

Բժ. Տիրարեան իր մասնագիտական կեանքը սուրիքց մարդուն առողջութեան ծառայելուն: Յայաստանի մէջ ասպիրանտուրան աւարտելէ ետք, 1992-ին վերադարձաւ ծննդավայր Յալէպ, ուր հիմնեց իր սեփական դարմանատունը եւ շուրջ երեք տասնամեակ ծառայեց հայ եւ արաբ ժողովուրդներուն՝ որպէս «ուրոլոգ» մասնագետ բժիշկ: Իր գիտելիքը, բարեխղճութիւնը եւ մարդասիրական մօտեցումը զինք դարձուցին բազմաթիւ հիւանդներու վստահելի բժիշկը:

Կատարելով սուրիական բանակին մէջ իր քաղաքացիական պարտքը, տղթթորը 1995-1998 թուականներուն ծառայեց Յալէպի Չիկուրական հիւանդանոցին մէջ:

Բժ. Շահէ Տիրարեան նաեւ ազգային-հասարակական կեանքին մասնակից մտաւորական էր: Կանուխ տարիքէն անդամակցած էր Կ.Ս.Ս.-ի շարքերուն եւ տարիներ շարունակ մաս կազմած էր միութեան պատգեթապոլի խումբին:

Ան նաեւ բժշկագիտական հետաքրքրական ու լուսաբանող յօդուածներ կը ստորագրէր «Արարատ» եւ «Չարթթթ» օրաթերթերուն մէջ, հրապարակելով առողջապահական արժեքաւոր գիտելիքներ:

Տղթթոր Շահէն ամուսնացած էր Անահիտ Յարութիւնեանի հետ եւ օրինուած էր մանչ զաւակով մը՝ Ռուբէնով: Սուրիական պատերազմի ամենածանր տարիներուն, երբ բազմաթիւ ընտանիքներ ստիպուած եղան լքել Յալէպը, բժ. Շահէ Տիրարեան երկար տարիներ մնաց իր ժողովուրդին կողքին եւ շարունակեց ծառայել համայնքին՝ բժիշկի իր առաքելութիւնը կատարելով վտանգաւոր պայմաններու մէջ: Միայն 2022-ին ընտանիքով հաստատուեցաւ հայրենիքի մէջ, ուր մինչեւ իր մահը որպէս «ուրոլոգ» կը գործէր Միրզոյեան դարմանատան մէջ՝ բուժելով հայրենիքի մէջ ապրող իր հիւանդները, Նոյն անսակարկ նուիրումով ու հոգատարութեամբ:

Բժ. Շահէ Տիրարեանի մահով կը կորսնցնենք գիտակից մտաւորական մը, մարդասէր բժիշկ մը, ազգային նուիրեալ մը: Անոր յիշատակը պիտի ապրի իր բժշկական ծառայութեան, իր մարդկային նկարագրին եւ իր ժողովուրդին հանդէպ ունեցած անշահախնդի նուիրումին մէջ:

«Արարատ» օրաթերթը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Տիրարեան, Յարութիւնեան, Ալիւնեան, Երեցեան եւ Պալեան ընտանիքներուն, ինչպէս նաեւ բոլոր հարազատներուն, բարեկամներուն եւ անոր յիշատակը յարգողներուն:

Յաւերժ ապրի տղթթորին յիշատակը եւ խաղաղութիւն անոր հոգիին:

**Հ.Կ.Բ.Մ. ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ ԸՆԿ. ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ**  
Դարմանատունը բաց է ամէն օր ստատուան ժամը 9:00-ին մինչև կէսօր, ետք ժամը 3:00 րոպի կիսով օրը:  
9-ը ուշադրութեան կը անձնակազմը նաեւ, թէ դեղատոմսը բաց է նաեւ նոյն ժամերուն:

- Երկուշաբթի**
  - Բժշ. Յակոբ Գլընճեան - Առամաւարտ
  - Բժշ. Անի Երկանեան - Մանկաբոյժ
- Երեքշաբթի**
  - Բժշ. Քրիստինա Կարպէտեան - Առամաւարտ
  - Բժշ. Ռաֆֆի Փոլատեան - Գեղձային հիւանդութիւններ
  - Բժշ. Արթուր Յիւլալ - Ակնաբոյժ
  - Կարո Ասեան - Ֆիզիքական բուժում
  - Բժշ. Մարալ Պոլաճեան - Հոգեբան
- Չորեքշաբթի**
  - Բժշ. Յարութ Տէմիրճեան - Ոսկրաբոյժ
  - Բժշ. Յակոբ Գլընճեան - Առամաւարտ
  - Մարիին Ասն - Սննդաբան
- Հինգշաբթի**
  - Բժշ. Քրիստինա Կարպէտեան - Առամաւարտ
  - Կարո Ասեան - Ֆիզիքական բուժում
  - Բժշ. Երիկան Արթուրեան - Ծնողաբերութեան եւ կանոնադրութեան
  - Բժշ. Միսակ Արթուրեան - Վիրաբոյժ
  - Բժշ. Մարալ Պոլաճեան - Հոգեբան
- Ուրբաթ**
  - Բժշ. Յակոբ Գլընճեան - Առամաւարտ
  - Բժշ. Անի Երկանեան - Մանկաբոյժ
  - Բժշ. Միսակ Արթուրեան - Սրտաբան
- Շաբաթ**
  - Բժշ. Միրեմ Խոնկալը - Քիմ. կոկորդ, ակնային
  - Բժշ. Էլիթի Քոբայանի - Ընդհանուր բժշկութիւն
  - Բժշ. Քրիստինա Կարպէտեան - Առամաւարտ
  - Բժշ. Յակոբ Գլընճեան - Առամաւարտ

@aebu.org @aebumedicosocialcenter 01 560 704 / 71 356 035

**ARARAD DAILY NEWSPAPER**  
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael Beirut | Lebanon | www.araraddaily.com email: araradoratert@gmail.com  
ارارات جريدة يومية إخبارية  
تصدر عن مركزنا للصحافة والنشر (م.م.ش)

ԱՌՈՂՋԱՊԱՏԱԿԱՆ ԲԱՏԱՌԻԿ ԱՌԱՋԱՐԿ՝ ԲՆՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ԿԷՍ ԳԻՆՈՎ:  
ՄՍՏՅԷՔ 50% ԶԵՂՉ՝ ԱՌՈՂՋԱՊԱՏԱԿԱՆ ԿԱՐԵՈՐ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸՆԿԱՐ:  
**Առաւելութիւններ**

- Կէս Գին. 50% զեղՉ՝ արեան բոլոր բնութիւններուն համար:
- Մատչելի ճառագայթային նկար. 25% զեղՉ՝ ճառագայթային նկարի (X-ray) բոլոր ծառայութիւններուն համար:
- Բարձր Որակ. «Աստաճիկ բնութիւններ» «Սէն Մարք» (St. Marc) տարալոմոմարաններուն մէջ:

**Ինչպէս Օգտուիլ**

- Այցելեցէ՛ք ՀԿԲՄ-ի դարմանատունը:
- Խնդրեցէ՛ք ձեր բժշկական ուղեգիրը:
- Ներկայացուցէ՛ք ՀԿԲՄ-ի ուղեգիրը «Սէն Մարք» տարալոմոմարան:
- Ստացէ՛ք 50% զեղՉ անմիջապէս:

Առաջնահերթութիւն տուէ՛ք ձեր առողջութեան ախտը: Այս բացառիկ առաւելութիւնը հիմա գործողէ: